

ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

Պաշտոնի /զբաղմունքի/ անվանումը	0732.04.01.4 «Երեսապատող-սալիկապատող
I. Դերը	Տարբեր շինությունների արտաքին, ներքին պատերի և հատակների մակերևույթները երեսապատող կերամիկական, սիմթետիկ նյութե, բնական և արհեստական քարե սալիկներով:
II. Խնդիրների բնագավառները	
<u>Խնդիրների բնագավառ 1. «Շինարարական գծագրություն»</u>	
Աշխատանքային գործընթացը	Երկրաչափական տարրերի և պատկերների կառուցում, շինարարական աշխատանքային գծագրերի, էսքիզների կատարում, շինարարական նյութերի և սալիկների պայմանական նշանների տեղադրում, չափումների, գծանշումների չափադրումների կատարում ըստ մասշտաբների:
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - երկրաչափական տարրերի և պատկերների կառուցված են, աշխատանքային գծագրերը և էսքիզները կատարված են, - շինարարական նյութերի և սալիկների պայմանական նշանները տեղադրված են, - չափումները, գծանշումները և չափադրումները ըստ մասշտաբների կատարված են:
<u>Խնդիրների բնագավառ 2. «Կերամիկական, սինթետիկ նյութե, բնական և արհեստական քարե սալիկներով երեսապատման աշխատանքներում օգտագործվող շինանյութերը, գործիքները, սարքերը և սարքավորումները»</u>	
Աշխատանքային գործընթացը	Շինարարական նյութերի հիմնական տեսակների, մեխանիկական, ֆիզիկական, հատկությունների և կիրառման բնագավառների ներկայացում, շաղախների, չոր խառնուրդների սոսինձների և մածիկների պատրաստում, <u>երեսապատման</u> աշխատանքներում կիրառվող սարքավորումների, մեխանիկական, օպտիկական և էլեկտրական գործիքների ընտրում և դրանց կառուցվածքների, գործողության սկզբունքների և շահագործման կանոնների մեկնաբանում, ստուգիչ-չափիչ գործիքների տեսակների նշանակությունների և օգտագործման ձևերի տարբերակում, հարթաչափով աշխատելու կանոնների, հորիզոնական և ուղղաձիգ մակերևույթների բաշխման, ձողանշման և նշահարման եղանակների բնութագրում::

<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - շինարարական նյութերի հիմնական տեսակները ընտրված են, ներկայացված են դրանց մեխանիկական, ֆիզիկական, տեխնոլոգիական հատկությունները և կիրառման բնագավառները, - շաղախների, չոր խառնուրդների սոսինձների և մածիկների պատրաստման կանոնները պահպանված են, սալիկապատման աշխատանքներում կիրառվող սարքավորումները, մեխանիկական, օպտիկական և էլեկտրական գործիքները ընտրված են, - գործիքների կառուցվածքները, գործողության սկզբունքները, և շահագործման կանոնները մեկնաբանված են, - ստուգիչ-չափիչ գործիքների տեսակները, նշանակությունները և օգտագործման ձևերը տարբերակված են, - հարթաչափով աշխատելու կանոնները, հորիզոնական և ուղղաձիգ մակերևույթների բաշխման, ձողանշման և նշահարման եղանակները բացահայտված են:
-----------------------------------	---

Խնդիրների բնագավառ 3. «Հիմքերի մակերևույթների երեսապատման համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ»

<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Արտաքին, ներքին պատերի և հատակի երեսապատման համար նախատեսված մակերևույթների չափագրում, գծանշում, հարթեցման աշխատանքների կատարում, մետաղական կամ պոլիէթիլենային ցանցերի ամրացում;</p> <p>Երեսապատման մակերևույթների նախապատրաստական աշխատանքների համար պահանջվող ամհրաժեշտ գործիքների, սարքերի և սարքավորումների ընտրում, գործիքների անխափան շահագործման և մետաղյա կամ փայտյա փայտամածերի հավաքման կայունության ստուգում:</p>
---------------------------------------	---

<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - երեսապատման-սալիկապատման ենթակա արտաքին, ներքին պատերի և հատակի մակերևույթների չափագրումը և գծանշումը կատարված է, - հարթեցման աշխատանքները, մետաղական կամ պոլիէթիլենային ցանցերի ամրացումը կատարված է, - հիմքերի մակերևույթների երեսապատման նախապատրաստական աշխատանքների կատարման համար
-----------------------------------	---

	<p>նախատեսված սարքերը, սարքավորումները և գործիքները ընտրված են,</p> <ul style="list-style-type: none"> - գործիքների անխափան շահագործումը ստուգված է , - մետաղյա կամ փայտյա փայտամածերի հավաքման կայունությունը ապահովված է՝ պահպանելով տեխնոլոգիական հաջորդականությունը:
<p><u>Խնդիրների բնագավառ 4. «Արտաքին, ներքին պատերի և հատակի մակերևույթներ բնական և արհեստական քարե, կերամիկական ու սինթետիկ նյութերի սալիկներով երեսապատման նախապատրաստական աշխատանքների կատարում և երեսապատում»</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Արտաքին, ներքին պատերի և հատակի մակերևույթների երեսապատման համար նախատեսված բնական, արհեստական քարե, կերամիկական ու սինթետիկ նյութ և գեղազարդ սալիկների գծանշում, նախապատրաստում և մշակում: մեխանիկական, նախապատրաստված հիմքի մակերևույթների հարթեցման աշխատանքների ստուգում:</p> <p>Սալիկների մշակման և տեղակայման համար նախատեսված գործիքների ապահովում, հարթեցման շերտի պատում և հիմքերի մակերևույթները նախապատրաստված սալիկներով երեսապատում:</p> <p>Երեսապատված մակերևույթի միջսալիկային մածիկապատում, բացակների լցափակում և մաքրում, երեսապատված մակերևույթների լվացման լուծույթների պատրաստում և լվացում:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - արտաքին, ներքին պատերի և հատակի մակերևույթների երեսապատման համար նախատեսված բնական, արհեստական քարե, կերամիկական ու սինթետիկ նյութ և գեղազարդ սալիկների գծանշումը, նախապատրաստումը և մեխանիկական մշակումը կատարված է, - նախապատրաստված հիմքերի մակերևույթների հարթեցման աշխատանքների կատարումը ստուգված է, - ապահովված են, մշակված սալիկների տեղակայման համար նախատեսված անհրաժեշտ գործիքներով և հարթեցման շերտի պատումով, - նախապատրաստված սալիկներով հիմքերի մակերևույթները երեսապատված են, - երեսապատված մակերևույթի միջսալիկային մածիկապատումը,

	<p>բացակների լցափակումը և մաքրումը կատարված են,</p> <ul style="list-style-type: none"> - երեսապատված մակերևույթների վազման լուծույթները պատրաստված են և կատարված է վազում:
<p><u>Խնդիրների բնագավառ 5. «Մետաղական կառուցվածքներով հիմքերի մակերևույթների որմնակապում և երեսապատում սինթետիկ վահանակներով, կերամոգրանիտե, բնական և արհեստական սալիկներով»</u></p>	
<p>Աշխատանքային գործընթացը</p>	<p>Արտաքին, ներքին պատերի մակերևույթների համար նախատեսված մետաղական կառուցվածքների ըստ սալիկների պարամետրերի և տեսակների, մետաղական կառուցվածքի ամրացման ձևերի, երևացող և չերևացող հարմարանքներով (կցակներ, գամեր, մետաղական ամրակներ), որմնակապման գործիքների, պարագաների և նյութերի ընտրում:</p> <p>Համաձայն աշխատանքային գծագրի մետաղական կառուցվածքի մակերևույթի չափանշումների և մետաղական կառուցվածքի որմնակապման կատարում՝ պահպանելով որմնակապման համաչափությունը:</p> <p>Չափիչ-ստուգիչ գործիքներով ուղղահայաց և հորիզոնական հարթությունների ստուգում, հավաքակցմանը անհրաժեշտ գործիքների, պարագաների, նյութերի ընտրում, մետաղական կառուցվածքով որմնակապված մակերևույթների հավաքակցում սինթետիկ վահանակներով, կերամոգրանիտե, բնական և արհեստական քարե սալիկներով:</p>
<p>Կատարման չափանիշներ</p>	<ul style="list-style-type: none"> - արտաքին, ներքին պատերի մակերևույթների համար նախատեսված մետաղական կառուցվածքները ըստ սալիկների պարամետրերի և տեսակների ընտրված են, - մետաղական կառուցվածքի ամրացման ձևերը, երևացող և չերևացող հարմարանքներով (կցակներ, գամեր, մետաղական ամրակներ) ընտրված են, - որմնակապման գործիքները, պարագաները և նյութերը ընտրված է, - մետաղական կառուցվածքի մակերևույթի չափանշումները, համաձայն աշխատանքային գծագրի կատարված է, - մետաղական կառուցվածքի որմնակապումը կատարված է՝ պահպանելով որմնակապման համաչափությունը,

	<ul style="list-style-type: none"> - չափիչ-ստուգիչ գործիքներով ուղղահայաց և հորիզոնական հարթությունների ստուգումը կատարված է , - հավաքակցման անհրաժեշտ գործիքները, պարագաները և նյութերը ընտրված են, - մետաղական կառուցվածքով որմնակապված մակերևույթների հավաքակցումը սինթետիկ վահանակներով, կերամոգրանիտե, բնական և արհեստական քարե սալիկներով կատարված է :
<u>Խնդիրների բնագավառ 6. «Երեսապատված-սալիկապատված մակերևույթների վերանորոգում և խնամք»</u>	
Աշխատանքային գործընթացը	<p>Կրամիկական, սինթետիկ նյութե, բնական և արհեստական քարե սալիկներով երեսապատված հիմքերի մակերևույթների շահագործման կանոնների պահպանում, խնամքի համար անհրաժեշտ նյութերի և դրանց առանձնահատկությունների ներկայացում, հատակի, պատի և միջսալիկային բացակների պաշտպանիչ հեղուկի դերի և օգտագործման եղանակները թնութագրում:</p> <p>Բնական քարե սալիկների մաքրում էլեկտրահղկիչ սարքի միջոցով, կերամիկական, սինթետիկ նյութերով սալիկապատված մակերեսների մաքրում կեղտաբծերից և երեսապատված սալիկներով մակերևույթների վերանորոգում, վնասված սալիկների հեռացում և փոխարինում:</p>
Կատարման չափանիշներ	<ul style="list-style-type: none"> - կերամիկական, սինթետիկ նյութե, բնական և արհեստական քարե սալիկներով երեսապատված հիմքերի մակերևույթների շահագործման կանոնները պահպանված են, - խնամքի համար անհրաժեշտ նյութերը և դրանց առանձնահատկությունները ներկայացված է, - հատակի, պատի և միջսալիկային բացակների պաշտպանիչ հեղուկի դերը և օգտագործման եղանակները բացահայտված է , - բնական քարե սալիկների մաքրումը էլեկտրահղկիչ սարքի միջոցով, կերամիկական և սինթետիկ նյութերից սալիկապատված մակերեսների մաքրումը կեղտաբծերից կատարված է, - երեսապատված սալիկներով մակերևույթների վերանորոգումը, վնասված սալիկների հեռացումը և փոխարինումը կատարված է:
III. Պատասխանատվությունը	<p>Պատասխանատվություն է կրում կատարած աշխատանքների որակի, իր առջև դրված աշխատանքային պարտականությունների</p>

<p>/անմիջական պատասխանատվության շրջանակ/</p>	<p>կատարման, արտադրական միջոցների արդյունավետ օգտագործման, սարքավորումների խնամքով օգտագործման, կազմակերպության ներքին կարգուկանոնի պահպանման, աշխատանքի անվտանգության կանոնների, հակահրդեհային անվտանգության կանոնների, արտադրական սանիտարիայի կանոնների պահպանման և ավելի ցածր որակավորում ունեցող աշխատողների կողմից կատարված աշխատանքի համար:</p>
<p>IV. Լեզուները</p>	<p>Հայերեն՝ գերազանց Ռուսերեն՝ բավարար Օտար լեզու՝ բավարար</p>
<p>V. Համակարգիչը</p>	<p>MS Office, Internet Explorer, AutoCAD, ArchiCAD համակարգչային ծրագրերի տիրապետում:</p>
<p>VI. Գիտելիքները</p>	<p>Մասնագիտական ոլորտի մասին ընդհանուր գիտելիքների իմացություն:</p> <ul style="list-style-type: none"> - Երկրաչափական տարրերի և պատկերների կառուցում, շինարարական աշխատանքային գծագրերի, էսքիզների կատարում, - սալիկներով երեսապատման համար կիրառվող շինարարական նյութերի հիմնական տեսակները, դրանց մեխանիկական, ֆիզիկական, քիմիական և տեխնոլոգիական հատկությունները. - երեսապատման աշխատանքներում կիրառվող սարքավորումների և մեքենայական գործիքների կառուցվածքը, գործողության սկզբունքը, շահագործման կանոնները. - երեսապատման աշխատանքներում կիրառվող աշխատանքային և ստուգիչ-չափիչ գործիքների տեսակները, նշանակությունները և օգտագործման գործելաձևերը. - հարթաչափով աշխատելու կանոնները. - երեսապատման ենթակա մակերևույթների նախապատրաստման պահանջները, գործելաձևերը. - հորիզոնական և ուղղաձիգ մակերևույթների բաշխման, ձողանշման և նշահարման եղանակները. - մետաղյա կամ փայտյա փայտամածերի նշանակությունը, կիրառման բնագավառները, դրանց պատրաստման, հավաքման և քանդման գործելաձևերը. - բնական և արհեստական սալիկների գծանշման և մեխանիկական մշակման եղանակները.

	<ul style="list-style-type: none"> - շաղախների, չոր խառնուրդների և մածիկների պատրաստման կանոնները. - սալիկների տեղադրման և ամրացման եղանակները. - ձևավոր սալիկների տեղադրման և ամրացման եղանակները. - գեղազարդային երեսպատման եղանակները. - միջսալիկային բացակների լցափակման և մաքրման գործելաձևերը. - երեսպատման որակին ներկայացվող պահանջները. - երեսպատման մակերևույթների նորոգման և սալիկների փոխարինման եղանակները. - անվտանգության տեխնիկայի նորմերն ու կանոնները, անհատական պաշտպանության միջոցները. - արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջներն ու նորմերը, - տուժածներին առաջին օգնություն ցուցաբերելու կանոնների իմացություն:
<p>VII. Կարողությունները և հմտությունները</p>	<p>Մասնագիտական տերմինաբանության ճիշտ ընկալում և կիրառում: Արժևորել և գնահատել ազգային և համամարդկային արժեքները: Տեսակավորել սալիկները ըստ չափերի, տեսակների, գույնի.</p> <ul style="list-style-type: none"> - պատրաստել շաղախներ, չոր խառնուրդներ և մածիկներ՝ ըստ տրված բաղադրության. - նախապատրաստել հիմքերի մակերևույթները սալիկներով երեսպատման համար. - պատել հարթեցման շերտը. - սալիկներով երեսպատել հարթ պատեր, հատակներ, - շաղախով լրացել միջսալիկային բացակները - ձգել մետաղե և սինթետիկ ցանցեր և շաղախով ծեփել. - կտրել, թործել և հեսանել սալիկներ. - գայլիկոնել անցքեր սալիկների վրա. - պատրաստել երեսպատված մակերևույթների լվացման լուծույթներ. - քանդել, նորոգել և փոխարինել վնասված սալիկները.

	<ul style="list-style-type: none"> - օգտվել համակարգչային տեխնիկայից. - արդյունավետ հաղորդակցվել գործընկերների և ղեկավարների հետ. - պահպանել անվտանգության տեխնիկայի, հակահրդեհային անվտանգության, արտադրական սանիտարիայի և հիգիենայի պահանջներն ու նորմերը. - տուժածներին ցուցաբերել առաջին օգնություն:
<p>VIII. Անձի որակական հատկանիշներ</p>	<p style="text-align: center;">Պետք է ունենա՝</p> <ul style="list-style-type: none"> - աշխատանքում կամ ուսման գործընթացում առաջադրանքների կատարման համար անձնական պատասխանատվության ստանձնում, - ճշտապահության գիտակցում, հարգալից վերաբերմունք ղեկավարի, գործընկերների և սպառողների նկատմամբ, - աշխատանքային կարգապահության, գիտելիքների, կարողությունների և հմտությունների անընդհատ զարգացում, - մասնագիտական ոլորտի մասին ընդհանուր գիտելիքներ և աշխատանքային գործունեության ընթացքում դրանք կիրառելու կարողություն, - մասնագիտական գործիքների, սարքավորումների, հարմարանքների և նյութերի արդյունավետ և նպատակային օգտագործում, - մասնագիտական կատարելագործման նպատակով անհրաժեշտ տեղեկություններ ընտրելու և համապատասխան աղբյուրներից օգտվելու հմտություն: